

ՄԻՐԱՄԱՐԳ ՎԱՐԳՈՒՄՅԱՆ

Երևանի Հայրուսակ համալսարանի կրթության որակի կառավարման գիտամեթոդական կենտրոնի տնօրեն, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ

ԿԱՐԻՆԵ ԱՂԱԲԱԲՅԱՆ

Խաչատրուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դասախոս

ՏԱՐԲԱԿԱՆ ԴԴՐՈՑԻ ԱՊԱԳԱ ՈՒՍՈՒՑՉԻ ԼԵԶՎԱԶԳԱՑՈՂՈՒԹՅԱՆ ՎԵՏԱԶՈՏՄԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ

Աշխատանքը նվիրված է տարրական դպրոցի ապագա ուսուցչի լեզվազգացողության զարգացման տեխնոլոգիաների մշակմանը: Կրտսեր դպրոցի ապագա ուսուցչի լեզվազգացողության փորձարարական ուսումնասիրության արդյունքում առանձնացվել են լեզվազգացողության զարգացման ու գնահատման հիմնական չափանիշները: Մասնավորապես, առաջարկվում է մշակել վարժությունների համախումբ ստեղծելու մեթոդիկա՝ ուսանողի լեզվազգացողության մակարդակը (բառիմաստի ընկալում, լեզվական միջոցների օգտագործում և այլն) որոշելու և գնահատելու համար:

Հանգուցային բառեր և արտահայտություններ՝ տարրական դպրոց, ապագա ուսուցիչ, լեզվազգացողություն, լեզվի արտահայտչամիջոցներ, լեզվական հմտություններ, համատեքստ:

Բարձրագույն մանկավարժական կրթությանը ներկայացվող արդի պահանջներում վերաիմաստավորվում է ապագա ուսուցչի պատրաստման գործընթացը: Այս առումով առանցքային խնդիրներից մեկը, անկասկած, ապագա ուսուցչի լեզվազգացողության, այսինքն՝ գործնական իրավիճակներում հանդիպող տեքստերի լեզվական առանձնահատկություններն ու բարդությունները որպես լեզվական կարողությունների և հմտությունների համախումբ ընկա-

լելու կարողության զարգացումն է [1, 2, 3]: Ըստ որում, ուշադրության կենտրոնում ոչ թե լեզվի տեսության բարձրակարգ իմացությունն է, ինչով անխոնջ և մշտապես զբաղվում է հանրակրթական համակարգը, այլ գործնական լեզվահաղորդակցության անհրաժեշտ մակարդակի ապահովումն իր բոլոր դրսևորումներով՝ ինչպես հանրային և պաշտոնական ելույթներում, այնպես էլ ամենօրյա կենցաղային շփումներում: Լեզվազգացողության գաղափարախոսությունը յուրաքանչյուր սովորողի և մասնագետի կոչ է անում կատարելապես տիրապետել մայրենի լեզվի գանձարանին, անընդհատ կատարելագործել կենդանի խոսք կառուցելու կարողություններն ու հմտությունները [4, 5, 6]:

Ուսումնասիրելով կրտսեր դպրոցի ապագա ուսուցչի լեզվազգացողության առանձնահատկությունները՝ մենք առանձնացրել ենք դրա զարգացման ու գնահատման հետևյալ հիմնական չափանիշները.

- ակտիվ բառապաշարի ծավալ և կազմ,
- համատեքստի ընկալման աստիճան,
- լեզվի արտահայտչամիջոցներին տիրապետելու մակարդակ,
- առաձների ու ասացվածքների ակտիվ պաշար:

Ուսանողների լեզվագագացողության աստիճանը որոշելու համար անհրաժեշտ է նախ որոշել նրանց կողմից տվյալ բառը, եզրույթը, դարձվածքը կամ լեզվական այլ միավոր ճիշտ ընկալելու կարողությունը, ստուգել լեզվի տարատեսակ արտահայտչամիջոցների օգտագործման նրանց հմտությունները համապատասխան խոսքային իրավիճակներում, այնուհետև գնահատել դրանց յուրացման աստիճանը:

Մասնավորապես, առաջարկվում է վարժությունների համախումբ՝ մշակված թեստի ձևաչափով՝ ուսանողի լեզվագագացողության մակարդակը (բառինաստի ընկալում, լեզվական միջոցների օգտագործում և այլն) որոշելու և գնահատելու համար: Իրոք, համակարգից անջատված վարժությունը, ներառելով լեզվական միջոցների միայն որոշակի տեսակ, անշուշտ նպաստում է լեզվական այդ միջոցի յուրացմանը, սակայն չի կարող ապահովել սովորողի լեզվագագացողության համալիր գնահատումը:

Նպատակ ունենալով ուսանողների լեզվագագացողության մակարդակի գնահատումը դարձնել ավելի դյուրին ու համակարգված, հետևելով բազմիցս փորձարկված և հաստատված ավանդույթներին՝ ստուգիչ հարցերը դասակարգել ենք երեք ենթախմբերով՝ ըստ բարդության աստիճանի.

1. պարզ վարժություններ,
2. միջին բարդության վարժություններ,
3. բարդ վարժություններ:

Նման մոտեցումը թույլ է տալիս իրականացնել ուսանողների լեզվական հմտությունների առավել տարբերակված և օբյեկտիվ գնահատում: Ստուգիչ հարցերի տրոհումը ըստ բարդության աստիճանի կարելի է իրականացնել՝ հիմք ընդունելով ընտրված բառերի (այդ թվում՝ գրաբարյան, նորաստեղծ, փոխառյալ և այլն) գործածման հաճախականությունը [7]:

Ոճաբանական գիտելիքները ստուգելու համար (քանի որ համապատասխան հաճախականության բառարան գոյություն չունի) ստուգիչ հարցերը դասակարգվել են ըստ բարդության աստիճանի՝ հիմք ընդունելով գործնական աշխատանքների դասաժամերին ուսանողների տված պատասխանների վերլուծության արդյունքում ձևավորված փորձարարական տվյալները [8,9]: Ակնհայտ է, որ ուսանողների համեմատաբար մեծ քանակի դեպքում (օրինակ, ամբողջ մանկավարժական համալսարանի կամ մի ֆակուլտետի կտրվածքով) լեզվագագացողության մակարդակի որոշումը, ինչպես նաև դրա զարգացման դինամիկայի ուսումնասիրումը կարելի է իրականացնել՝ կիրառելով մաթեմատիկական մոդելավորման և ծրագրավորման համապատասխան միջոցները [9]: Համակարգչային ստուգման առավել տարածված և պարզագույն ձևը թեստավորումն է, երբ ուսանողը հարցի ճիշտ պատասխանը ընտրում է տրված մի քանի տարբերակներից [10]:

Ուսանողների լեզվագագացողության մակարդակի համալիր գնահատման համար (ակտիվ բառապաշարի ծավալ և կազմ, համատեքստի ընկալման աստիճան, լեզվի արտահայտչամիջոցներին տիրապետելու մակարդակ, առածների և ասացվածքների ակտիվ պաշար և այլն) թեստերի ձևաչափով կարելի է ներկայացնել առաջադրանքների երկու համախումբ: Ըստ որում, հարցերի առաջին համախումբը նախատեսված կլինի բառինաստի ընկալման ստուգմանն ու գնահատմանը համատեքստից դուրս, իսկ երկրորդը՝ համատեքստում:

Այսպիսով, ապագա ուսուցչի լեզվագագացողության զարգացումը, իսկ դրա արդյունքում՝ մայրենի լեզվի հարուստ արտահայտչամիջոցների կիրառման կարողությունների ձևավորումն ու զարգացումը պայմանավորված են երեք

հիմնական գործոններով՝ մայրենի լեզվի արտահայտչամիջոցների իմացություն, դրանց օգտագործման համար նպաստավոր իրավիճակների տարբերակում և հաղորդակցման (այս դեպքում՝ ուսանողների, հետագայում՝ նաև աշխատանքային ընկերների հետ) գործընթացում դրանց օգտագործման անձնական փորձ: Սա նշանակում է, որ համակարգչային թեստերի մշակման ժամանակ չի կարելի սահմանափակվել ուսանողների գիտելիքների լոկ ծավալի ստուգմամբ. անհրաժեշտ է թեստերը ուղղորդել ուսանողների լեզվագագոթողության ստուգմանը գործնական իրավիճակներում:

Գործնականում, լեզվագագոթողության մակարդակի ստուգումը արդյունավետ է ստուգման կարճ ժամանակահատվածի դեպքում: Իսկապես, երբ ժամանակը չի բավարարում առաջադրանքի կատարման բոլոր հնարավոր տարբերակների դիտարկման, առավել ևս՝ դրանց վերլուծության, գնահատման և առավել հիմնավորված պատասխանն ընտրելու համար, ուսանողը «ստիպված է» պատասխանի ընտրությունը կատարել արագ՝ դեկավարվելով սեփական փորձով և իր մեջ հաստատագրված գիտելիքների պաշարով՝ ապավինելով իր գիտելիքներին, լեզվական կարողություններին և լեզվագագոթողությանը: Ըստ այդմ, ստուգումների իրականացման տեսանկյունից, լավագույն միջոցներից մեկը համակարգչային թեստավորումն է՝ ժամանակի սղության պայմաններում առաջադրանքների կատարման կարողությունները ստուգելու համար: Իսկապես, համակարգչի միջոցով կարելի է ցանկացած ճշգրտությամբ տալ առաջադրանքի կատարման ժամանակը, ամրագրել նոր առաջադրանքի կատարման սկիզբը ամ-

բողջովին բացառելով մարդկային գործոնը [10, 11]: Առաջին հայացքից կարող է թվալ, թե համակարգչային ստուգման դեպքում ամեն ինչ միօրինականացվում է, և անտեսվում են ուսուցման այնպիսի կարևորագույն բաղադրիչներ, ինչպիսիք են ինքնուրույն մտածողությունը, ինքնատիպ լուծումներ որոնելու և գտնելու կարողությունը: Իրականում, համենայն դեպս դիտարկվող խնդրի շրջանակներում, հազիվ թե կարելի է մեծ ստեղծագործական ձեռքբերումներ ակնկալել ուսանողներից, եթե նրանք քաջատեղյակ չեն Երեկացու և Սայաթ-Նովայի, Թումանյանի և Իսահակյանի, Տերյանի և Սևակի ստեղծագործություններին, ինչպես նաև (թարգմանությունների միջոցով) համաշխարհային գրականության լավագույն նմուշներին:

Հարկ է նշել, սակայն, որ, սովորաբար, համակարգչային ստուգումն ու գնահատումը ունի այն յուրահատկությունը (այս դեպքում՝ թերությունը), որ թեստերում ընդգրկված հարցերը և դրանց ճիշտ պատասխանները շատ արագ տարածվում են ուսանողների մեջ, ինչը գրեթե բացառում է հարցման մասնակիցների համապատասխան գիտելիքների, ունակությունների, կարողությունների, իսկ մեր կողմից դիտարկվող խնդրի տեսանկյունից՝ լեզվագագոթողության իրական պատկերը ստանալու հավանականությունը, և դրանով իսկ բացառվում է թեստերի կրկնակի օգտագործումը: Այնուամենայնիվ, այս խնդրի լուծումը դժվար չէ. պարզապես անհրաժեշտ է ստեղծել թեստերի անհրաժեշտ ծավալի բազա և անընդհատ լրացնել այն՝ փոփոխելով թեստերի բովանդակությունը:

Հոդվածի ներկայացման փարեթիվը՝ 01.07.2013 թ.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. The Bologna declaration, Joint declaration of the European Ministers of Education convened in Bologna on the 19th of June 1999.
2. The European Higher Education Area – Achieving the Goals. Communiqué of the Conference of European Ministers Responsible for Higher Education, Bergen, 19–20 May, 2005.
3. Խ. Արսլյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ռազմավարություն (հայեցակարգ եվ զարգացման ծրագիր). Երևան, 2011, 34 էջ:
4. **Никольская О. Л.**, Концепция актуализации творческого потенциала студентов и учителей и ее реализация в образовательном процессе. Вестник ТГПУ, 2011. 10 (112), с.24 – 27.
5. **Яковченко Е. В.**, Экспериментальное исследование языковой способности в условиях учебного двуязычия, Диссертация на соискание ученой степени кандидата филологических наук, Барнаул, 2003.
6. **Ռ. Զ. Զիջյան, Կ. Հ. Աղաբաբյան.** Ուսանողների լեզվազգացողության զարգացման խնդիրները արդի պայմաններում. 2013, էջ 161–172:
7. **Բ. Կ. Ղազարյան,** Ժամանակակից հայոց լեզվի հաճախականության բառարան, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ, 1982, 758 էջ:
8. **Կ. Հ. Աղաբաբյան, Ա. Վ. Սարգսյան,** Լեզվական հենքային գործիմացությունների ձևավորումը զուգորդությունների կիրառման միջոցով (լեզուների ուսուցման գործընթացում), Մանկավարժական կրթություն. հայացք դեպի ապագա: Միջազգային գիտաժողովի նյութեր, Երևան 2007, 163–167:
9. **Կ. Հ. Աղաբաբյան.,** Լեզվական մտածողության զարգացման ընթացքի ուսումնասիրումը. ՀՊՄՀ գիտական տեղեկագիր, 2011, N 2–3, էջ 218–223:
10. Математические методы в социальных науках, сб. Статьей под ред. П. Лазаревельда и Н. Генри, М., изд. Прогресс, 1973, с. 349.
11. **Андерсен П., Морган Дж.,** Разработка тестов и анкет для национальной оценки учебных достижений, книга 2, М., Логос, 2011, с. 201.

ТЕХНОЛОГИИ ИЗУЧЕНИЯ ЯЗЫКОВОГО МЫШЛЕНИЯ БУДУЩЕГО УЧИТЕЛЯ НАЧАЛЬНОЙ ШКОЛЫ

ВАРДУМЯН СИРАМАՐԴ

*Научный руководитель научно–методического центра
обеспечения качества образования
Ереванского университета АЙБУСАК,
кандидат педагогических наук, доцент*

ԱԳԱԲԱԲՅԱՆ ԿԱՐԻՆԵ

*Преподаватель кафедры родного языка и методики его преподавания
Армянского государственного педагогического университета
имени Хачатура Абовяна*

Работа посвящена разработке технологий для развития чувства языка будущих учителей начальной школы. На основе анализа результатов экспериментальных исследований выявлены основные критерии оценки и развития уровня чувства языка будущих учителей начальной школы. В частности, предлагается методика создания комплекса упражнений для определения уровня чувства языка (осмысление значения слова, навыки употребления речевых ресурсов и т.д.) студентов.

Дата представления статьи: 01.07.2013 г.

THE DEVELOPMENT OF TECHNOLOGIES FOR THE DEVELOPMENT OF FUTURE
TEACHERS' LANGUAGE SENSE IN PRIMARY SCHOOLS

SIRAMARG WARDUMYAN

*Scientific adviser of scientific and methodological center
of quality of education at Yerevan University HAYBUSAK,
Ph.D., in Pedagogical Sciences, Associate Professor*

KARINE AGHABABYAN

*Lecturer in the native language
its teaching Methodology of the Armenian pedagogical
University after Khachatur Abovyan*

The work is dedicated to the development of technologies for the development of future teachers' language sense in primary schools. Based on the analysis of experimental results revealed the main evaluation criteria and the level of development of language sense of the future teachers in primary school. In particular, the technique of creating a complex exercise to determine the level of sense of language (comprehension of the word, skills, resources and the use of voice, etc.) students.

Article submission date 01.07.2013